ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թվականի N 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԿՆԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,04857 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63–րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետով, հիմք ընդունելով Արամ Ստեփանյանի 2024 թվականի նոյեմբերի 7-ի-ի դիմում-խնդրանքը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս համայնքի Ակներ գյուղի 15-րդ փողոցի թիվ 12 հասցեում Արամ Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող մոդուլային անասնաշենքի և հողատարածքի ընդլայնման համար, հողամասին կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0,04857հա (կադաստրային ծածկ. 09-024-0217-0078) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արամ Ստեփանյանին 44000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամ կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. հունիսի 23
ք. Գորիս